«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի

տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

________________ Ս. Աղայան

"29" ___06___ 2026թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Գեորգի Ռաֆայելի Ավետիսյանի «Շների լեյշմանիոզի համաճարակաբանությունը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ԺԶ.00.01 «Անասնաբուժություն» մասնագիտությամբ անասնաբուժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Կարծիքը քննարկվել է Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի գիտխորհրդի 29.06. 2026 թ. կածացած թիվ 9 նիստում:

Ներկա էին գիտխորհրդի 18 անդամ՝ կ.գ.թ. Ս. Աղայան, Գ. կ.գ.թ. Գևորգյան, կ.գ.թ. Հ. Խաչատրյան, կ.գ.դ. Բ. Գաբրիելյան, կ.գ.թ. Մ. Քալաշյան, կ.գ.թ. Է. Ղուկասյան, կ.գ.թ. Ի. Խորոզյան, կ.գ.թ. Մ. Դալաքյան, կ.գ.թ. Գ. Կարագյան, կ.գ.թ. Լ. Համբարյան, կ.գ.թ. Ս. Հակոբյան, ան.գ.թ. Մ. Վարդանյան, կ.գ.թ. Հ. Գևորգյան, կ.գ.թ. Վ. Սպանգենբերգ, կ.գ.թ. Ն. Զարիկյան, կ.գ.թ. Մ. Ղասաբյան, կ.գ.թ. Ռ. Պետրոսյան, կ.գ.դ. Վ.Հայրապետյան

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Ներկայացված ատենախոսությունը նվիրված է առողջապահական և անասնաբուժական չափազանց կարևոր հիմնախնդրի՝ լեյշմանոզի ուսումնասիրությանը: Լեյշմանիոզները ծանր զոոնոզային մակաբուծային հիվանդություններ են, որոնք տարածված են երկրագնդի արևադարձային և մերձարևադարձային գոտիներում: Կլիմայի գլոբալ փոփոխություններով պայմանավորված, լեյշմանիոզի նոզոարեալը ընդլայնվում է՝ ընդգրկելով նոր, նախկինում ապահով տարածքներ: Ատենախոսությունը նվիրված է Հայաստանի պայմաններում շների լեյշմանիոզի հարուցչի էկոլոգիայի և հիվանդության

համաճարակաբանության ուսումնասիրությանը, ինչպես նաև լեյշմանիոզի կանխարգելման և վերահսկման համալիր միջոցառումների մշակմանը:

Աշխատանքի արդիականությունը

Գ.Ռ. Ավետիսյանի ատենախոսության թեման չափազանց արդիական է, քանի որ լեյշմանիոզները լայնորեն տարածված են երկրագնդի վրա և լուրջ վտանգ են ներկայացնում մարդու առողջության համար: Մեկ դարից ավել Հայաստանը հանդիսանում է ընդերային և մաշկային լեյշմանիոզների նկատմամբ էնդեմիկ տարածք, ուստի ամեն տարի արձանագրվում են հիվանդությունների դեպքեր: Միևնույն ժամանակ, մի քանի տասնյակ տարիների ընթացքում լեյշմանիոզի համապարփակ հետազոտություն Հայաստանում չի իրականացվել:

Աշխատանքի կառուցվածքը

Աշխատանքը շարադրված է 109 էջի վրա, կազմված է ներածությունից, գրական ակնարկից, սեփական հետազոտություններից, որոնք ներառում են հետազոտության նյութը և մեթոդները, 2 ենթագլուխ սեփական հետազոտությունների արդյունքները և արդյունքների քննարկումը, ինչպես նաև եզրակացություններից, գործնական առաջարկություններից և գրականության ցանկից, որը բաղկացած է 233 անվանումից: Ատենախոսությունը պարունակում է 10 աղյուսակ և 15 գծապատկեր, ինչպես նաև փորձարկումների ակտեր և տեղեկանքներ:

Գիտական նորույթը

Ատենախոսությունը պարունակում է էական գիտական նորույթ: Հեղինակի կողմից առաջին անգամ Հայաստանում իրականացվել է շների լեյշմանիոզի տարածվածության համալիր հետազոտություն: Համակարգված ձևով վերլուծվել են շների լեյշմանիոզի հիմնական համաճարակաբանական ցուցանիշներն ու օրինաչափությունները: Ատենախոսի կողմից մշակվել և անասնաբուժական ու առողջապահական մարմիններին են ներկայացվել ընդերային լեյշմանիոզի կանխարգելման և վերասկման միջոցառումների գիտականորեն հիմնավորված առաջարկություններ:

Տեսական և գործնական նշանակությունը

Աշխատանքի գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ անասնաբուժական և առողջապահական մարմիններին են ներկայացվել արժեքավոր

առաջարկություններ ընդերային լեյշմանիոզի կանխարգելիչ և վերահսկիչ միջոցառումների վերաբերյալ՝ կիրառելով "Մեկ առողջություն" հայեցակարգը: Հեղինակի կողմից իրականացված հետազոտության արդյունքները կարող են կիրառվեն գործնական անասնաբուժությունում, բժշկությունում, գիտական աշխատանքներում: Արդյունքները նաև կարելի է ներառել անասնաբուժական, բժշկական և կենսաբանական մասնագիտությունների ուսումնական ծրագրերում՝ «Մակաբուծաբանություն և կենդանիների ինվազիոն հիվանդություններ», «Ինֆեկցիոն հիվանդություններ», «Անողնաշարավոր կենդանաբանություն» և այլ առարկաների դասավանդման ընթացքում:

Աշխատանքի բովանդակությունը

Գրական ակնարկում (գլուխ 1) հեղինակը բավականաչափ մանրամասն նկարագրում է լեյշմանիաների բազմազանությունը, ձևաբանական և կենսաբանական առանձնահատկությունները, լեյշմանիոզների համաճարակաբանական առանձնահատկությունները և տարածվածությունը, ախտածնությունը, կլինիկական պատկերը և ախտաբանաանատոմիական փոփոխությունները, հիվանդության ընթացքի և կլինիկական արտահայտման առանձնահատկությունները մարդկանց և տարբեր կենդանիների շրջանում, լեյշմանիոզների ախտորոշման մոտեցումներն ու մեթոդները, ինչպես նաև հիվանդության բուժմանը կանխարգելմանը և վերահսկմանն ուղղված միջոցառումները: Հատուկ պետք է նշել հեղինակի անդրադարձը հակալեյշմանիոզային պատվաստումներին և նրանց արդյունավետությանն ու օգտագործման հնարավորություններին: Ընդհանուր առմամբ ատենախոսի կողմից վերլուծվել է 233 արտասահմանյան գրական աղբյուր:

Գլուխ 2-ում ատենախոսը նկարագրում է հետազոտության նյութը և մեթոդները, ներկայացնում է նմուշառման կարգը, հետազոտությունների ծավալը, լաբորատոր ախտորոշման չափորոշիչները և ախտորոշման մոտեցումները: Հեղինակը մանրամասն ներկայացնում է օգտագործված բջջաբանական, հյուսվածաբանական, մոլեկուլային գենետիկական և իմունաբանական մեթոդները:Նկարագրված է նաև ստացված փորձարարական արդյունքների վիճակագրական վերլուծության մեթոդները և ցուցանիշները:

Ատենախոսության 3-րդ գլուխը, որը կազմված է 2 ենթագլուխներից, նվիրված է Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում շնագղիների շրջանում լեյշմանիոզի տարածվածության ուսունասիրությանը: Այս տեսակետից ատենախոսի կողմից կատարվել է ծավալուն և բազմակողմանի աշխատանք, ընդ որում, նշված հետազոտությունների զգալի մասը Հայաստանում իրականացված է առաջին անգամ

հենց ատենախոսի կողմից, կիրառելով ժամանակակից և արդյունավետ մեթոդներն ու մոտեցումները:

Ենթագլուխ 3.1-ը նվիրված է Հայաստանում լեյշմանիոզի ուսումնասիրության պատմությանը և առողջապահական համակարգում իրավիճակի վերլուծությանը:

Ենթագլուխ 3.2-ում հեղինակը ներկայացնում է Հայաստանում շների շրջանում լեյշմանիոզի տարածվածության ուսումնասիրության արդյունքները: Հետազոտություններն իրականացվել են սեզոնային շարժընթացով, տարբեր մարզերում, կենդանիների տարբեր տարիքային խմբերում, ներառելով կենդանիների զգալի գլխաքանակ: Բացահայտվել են լեյշմանիաներով շների վարակվածության վրա ազդող գործոնները, վարակվածության սեզոնային շարժընթացը: Վերլուծվել է լեյշմանիոզի փոխանցման ցանցը: Հաշվարկվել է լեյշմանիաներով կենդանիների վարակման ռիսկերը, որոշվել են առավել ռիսկային տարածաշրջաններ:

Համաձայն ատենախոսի, լեյշմանիաներով շների վարակվածությունը Հայաստանի տարբեր մարզերում կազմում է 12-13%: Լեյշմանիոզի նկատմամբ առավել ընկալունակ են 1-6 տարեկան շները: Շնագայլերի վարակման հավանականությունը մոտ 1,5 անգամ ավելի բարձր է, քան շներինը:

Ատենախոսության շարադրանքն ավարտվում է եզրակացություններով և գործնական առաջարկություններով: Նրանք տրամաբանորեն բխում են ատենախոսի սեփական հետազոտությունների արդյունքներից, ձևակերպված են հստակ և հակիրճ:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով գրախոսվող աշխատանքը, անհրաժեշտ ենք համարում ուշադրություն դարձնել ատենախոսության ձևակերպման ընթացքում տեղ գտած որոշ անճշտությունների վրա:

Դիտողություններ

1. Պետք է առանձնացնել և հստակ տարբերակել հետազոտության նպատակը և խնդիրները:
2. «Նյութը և մեթոդները» բաժնում հեղինակը նշում է, որ հետազոտություններն իրականացվել են համալիր եղանակով, ներառելով մակաբուծաբանական մանրադիտակային, շճաբանական և մոլեկուլային գենետիկական մեթոդները, մինչդեռ «Հետազոտությունների արդյունքներում» հիշատակվում են միայն արագ իմունաքրոմատոգրաֆիկ թեստերի օգնությամբ իրականացրած հետազոստությունները: Միայն թեստերի հիման վրա չի կարելի դատել

լեյշմանիոզային իրավիճակի մասին, և միայն թեստի դրական արդյունքը չի կարող որակվել որպես լեյշմանիոզի դեպք:

3. «Սեփական հետազոտություններ» գլխում հեղինակը ներկայացվում է Հայաստանում լեյշմանիոզի հարուցչի փոխանցող մլակների տեսակային կազմը: Քանի որ «Նյութը և մեթոդները» գլխում բացակայում է մլակների հավաքման կամ լաբորատոր նույնականացման որևէ նկարագրություն, պարզ չէ՝ սրանք հեղինակի սեփական արդյունքներն են, թե՞ գրականության տվյալների մեջբերում: Եթե տեսակային կազմը որոշվել է հեղինակի կողմից, ապա պետք էր նկարագրվեր մեթոդաբանական մոտեցումները:
4. Վիճակագրական վերլուծության թերություններից է նաև սեղմագրի էջ 8-ի աղյուսակ 2-ում, որտեղ ներկայացված է 95% հավաստիության միջակայքը (95% CI), տվյալները բերված են մեկ միասնական թվով (օրինակ՝ Լոռի՝ 11,1, Տավուշ՝ 10,3): Մաթեմատիկական վիճակագրության կանոններով՝ 95% CI-ը պետք է արտահայտվի միջակայքով (ստորին և վերին սահմաններով), որը ճիշտ արել է հաջորդ էջերի աղյուսակներում: Բացի այդ, աղյուսակ 2-ի այունակ 2-ում մարդկանց վարակվածության տոկոսների հաշվարկման մեթոդաբանությունը անհասկանալի է, քանի որ բացակայում է ընդհանուր հետազոտված մարդկանց քանակը (N):
5. Եզրակացությունները ատենախոսությունում և սեղմագրում որոշակիորեն տարբերվում են: Մասնավորապես, ատենախոսությունում հեղինակը ներկայացնում է 6 եզրակացություն, իսկ սեղմագրում՝ 7:
6. Ատենախոսության տեքստում տեղ են գտել զգալի քանակությամբ տպագրական, ուղղագրական և կետադրական սխալներ:
   - Ամենուրեք՝ ELIZA-ի փոխարեն պետք է գրվի ELISA (enzyme-linked immunosorbent assay):
   - «phlebotomine տեսակի» արտահայտության փոխարեն պետք է գրել «Phlebotominae ենթաընտանիքի...», մեծատառ:
   - *Phlebotomus* և *Lutzomyia* ոչ թե սեռեր են, այլ՝ ցեղերը:
   - Մլակներում առաջանում են լեյշմանիաների ոչ թե ինվազիվ, այլ ինվազիոն ձևեր:
   - «Աշխատանքի գիտական նորույթը» բաժնում «Լեյշմանիոզով վարակված/վարակվածություն» արտահայտությունները ճիշտ չեն; պետք է

լինի «լեյշմանիաներով վարակված/վարակվածություն»: Վարակվում են ոչ թե հիվանդությունով, այլ հարուցիչով:

Առաջարկություններ

- Գրականության ակնարկի լեյշմանիոզի ախտորոշման մեթոդնիերին նվիրված ենթագլխում կարելի էր առանձնացնել ախտորոշման մոլեկուլային գենետիկական ախտորոշման մեթոդները, հատկապես, եթե առանձնացված են ախտորոշման շճաբանական մեթոդները:
- Գրական ակնարկն ավելի կհարստանար, եթե հեղինակը անդրադառնար Հայաստանում շների լեյշմանիոզի ուսումնասիրությանն ուղղված Ռ. Սլոբոդյանիկի և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հետազոտողների աշխատանքներին:
- «Հետազոտությունների նյութը և մեթոդները» գլխում ներկայացված հարուցիչների ցանկն ավելի ճիշտ կլիներ ներկայացնել «Գրական ակնարկում»:
- «Սեփական հետազոտությունների» 3.1 ենթագլխում ներկայացված Հայաստանում լեյշմանիոզի ուսումնասիրության պատմությունը ճիշտ կլիներ տեղադրել գրական ակնարկում, թողնելով միայն առողջապահական համակարգում լեյշմանիոզային իրավիճակի վերլուծությունը:
- Աշխատանքն ավելի կհարստանար, եթե հաշվարկվեր կենդանիների և մարդկանց վարակվածության ցուցանիշների միջև համահարաբերակցության գործակիցը:

Եզրակացություն

Գեորգի Ռաֆայելի Ավետիսյանի «Շների լեյշմանիոզի համաճարակաբանությունը Հայաստանի Հանրապետությունում» ատենախոսությունը ավարտուն, ինքնուրույն և գիտականորեն հիմնավորված հետազոտություն է, որն առանձնանում է արդիականությամբ, կատարված հետազոտությունների ծավալով, բարձր տեսական և գործնական նշանակությամբ, գիտական նորույթով, ինչպես նաև ստացված արդյունքների բազմակողմանի վերլուծությամբ:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունն արտացոլված են ատենախոսության սեղմագրում, ինչպես նաև հրատարակված 5 աշխատություններում:

Եզրակացությունները տրամաբանորեն բխում են աշխատանքի նպատակից և առաջարկված խնդիրներից:

Աշխատանքը լիովին համապատասխանում է ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջներին, իսկ հեղինակ՝ Գեորգի Ռաֆայելի Ավետիսյանը, արժանի է անասնաբուժական գիտությունների թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Գրախոսներ՝

Անասնաբուժական գիտությունների թեկնածու,
Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի
գիտական կենտրոնի ընդհանուր
հելմինթոլոգիայի և մակաբուծաբանության
լաբորատորիայի վարիչ՝ Մ.Վ. Վարդանյան

Կենսաբանական գիտությունների թեկնածու,
Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի
գիտական կենտրոնի մոլեկուլային
մակաբուծաբանության լաբորատորիայի
ավագ գիտաշխատող՝ Օ.Վ.Շչերբակով

Մ.Վ. Վարդանյանի և Օ.Վ. Շչերբակովի ստորագրությունները ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի
գիտական կենտրոնի գիտական քարտուղար,
կենսաբանական գիտությունների թեկնածու Հ.Գ.Խաչատրյան

29.06.2026թ.